

Հ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ Ա Կ Ց Ո Ւ Թ Յ Ա Ն Հ ՈՒՇ Ա Գ Ի Ր

ք.Քավառ

« 09 » _____ մարտի _____ 2013թ.

«Քավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Համալսարան)՝ ի դեմս ռեկտոր Ռ. Խ. Հակոբյանի, ով գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Ֆեդարթունիքի մարզի Վարդենիկի կրթահամալիր» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կրթահամալիր)՝ ի դեմս տնօրեն Կ. Ս. Բաղայանի, ով գործում է Կրթահամալիրի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), ելնելով Հայաստանի Հանրապետության կրթական համակարգին ներկայացվող արդի պահանջներից, Կրթահամալիրի սովորողներին՝ նրանց հակումներին, կարողություններին, նախասիրություններին համապատասխան ապագա մասնագիտության ընտրության հարցում աջակցելու, Համալսարանում գործող մասնագիտությունների վերաբերյալ սովորողների մոտ պատկերացումներ և կողմնորոշում ձևավորելու նպատակով կնքեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան

Կողմերը պարտավորվում են համագործակցել՝ Կրթահամալիրի սովորողների իմացական, ստեղծագործական, վերլուծական կարողությունները զարգացնելու, Համալսարանում ուսուցանվող մասնագիտություններին նրանց ծանոթացնելու և այլ ուղղություններով:

2. Համալսարանը պարտավորվում է՝

- 2.1. Կրթահամալիրին անհատույց տրամադրել ուսումնամեթոդական ձեռնարկներ, գիտական պարբերականներ, ուղեցույցեր, այլ նյութեր,
- 2.2. Մեթոդական աջակցություն ցուցաբերել Կրթահամալիրի ուսուցիչներին, նրանց համար կազմակերպել կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ,

- 2.3. Յուրաքանչյուր տարի Կրթահամալիրի աշակերտների համար կազմակերպել «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր Համալսարան՝ նրանց հնարավորություն ընձեռելով հանդիպելու Համալսարանի ղեկավարության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ՝ ծանոթանալու Համալսարանի ֆակուլտետներին, ամբիոններին, ուսուցանվող մասնագիտություններին և ուսումնառության առկա հնարավորություններին,
- 2.4. Կրթահամալիրի ավարտական դասարանների աշակերտների համար իրականացնել տեղեկատվական աշխատանք՝ նախապատրաստելով բուհ ընդունվելուն,
- 2.5. Կրթահամալիրի հետ համատեղ՝ ավարտական դասարանների լավագույն աշակերտների համար կազմակերպել օլիմպիադաներ, այլ միջոցառումներ,
- 2.6. Կրթահամալիրի ուսուցիչների որակավորման բարձրացմանը նպաստելու նպատակով նրանց մասնակից դարձնել Համալսարանում կազմակերպվող գիտաժողովներին և սեմինարներին:

3. Կրթահամալիրը պարտավորվում է՝

- 3.1. Կրթահամալիրում կազմակերպել Համալսարանի պրոֆեսորադասական կազմի և սովորողների հանդիպումներ, ուսումնակրթական աշխատանքներ, զրույցներ, բանավեճեր և քննարկումներ, զրավոր աշխատանքներ, թեմատիկ մրցույթներ և այլ միջոցառումներ, որոնք կնպաստեն սովորողների մասնագիտական կողմնորոշմանը,
- 3.2. Ուսումնական գործընթացում ըստ անհրաժեշտության ներգրավել նաև Համալսարանի մասնագետներին,
- 3.3. Համալսարանի մասնագետների համար ապահովել բնականոն գործունեության պայմաններ,
- 3.4. Համալսարանի ներկայացուցիչների հետ հանդիպումներին հրավիրել նաև Կրթահամալիրի սովորողների ծնողներին՝ Համալսարանի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով:

4. Հուշագրի գործողության ժամկետը, փոփոխումը, լրացումը և լուծումը

- 4.1. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 5 տարի ժամկետով,
- 4.2. Սույն Հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Հուշագրի անբաժանելի մասը,
- 4.3. Սույն Հուշագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 4.4. Սույն Հուշագիրը բաղկացած է 3 էջից, կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները

«Համալսարան»

«Գավառի պետական
համալսարան» ՊՈԱԿ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ,
ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1
Անելիք Բանկ
Հ/Հ 118061043626
ՀՎՀՀ 08402753
Հեռ.՝ 0-10-28-20-75
0-264-3-05-05, 0-264-2-57-75

«Կրթահամալիր»

«Վարդենիկի կրթահամալիր» ՊՈԱԿ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Վարդենիկ
Առեկսիմբանկ
Հ/Հ 2380004174730100
ՀՎՀՀ 08202669
Հեռ.՝ 094-06-95-55

6. Կողմերի ստորագրությունները

